ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 3. Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին օրենսդրությունը

Հիդրոօդերևութաբանական գործունեության իրավական կարգավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

Մթնոլորտի և ջրոլորտի վիճակի մասին տեղեկությունների հավաքման, մշակման, պահպանման և տարածման կազմակերպական-տեխնիկական միջոցների օգտագործման ընթացքում ծագող գույքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

Ազգային հիդրոօդերևութաբանական համակարգի պետական կազմակերպություններում և ծառայություններում ծառայողական զենքի ձեռքբերման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~«Զենքի մասին»~~ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

(3-րդ հոդվածը փոփ. 20.03.02 ՀՕ-312)